ՍԵԲԵՈՍԻ ԵՐԿԸ ՈՐՊԵՍ VII ԴԱՐԻ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ն. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

Սեբեոսի պատմությունը թեև բազում հետազոտությունների առարկա է դարձել, սակայն բանասերների ուշադրությունը հիմնականում սևեռված է եղել նրա բնագրի սկզբում կցված Անանունի նախնական պատմությանը (Նախերգանք)։ Սեբեոսի բուն պատմությունը ևս ուսումնասիրվել է, սակայն հայագետներին (Ն. Ակինյան[1], Գ. Աբգարյան[2], Պ. Անանյան[3] և այլք) հատկապես գրավել է նրա բնագրի բանասիրական քննությունը։ Սեբեոսի պատմական տեղեկությունների քննությունը ինչ-որ չափով կատարվել է ռուսերեն երկու թարգմանությունների (Ք. Պատկանյան[4], Ս. Մալխասյան[5]), հայերեն բնագրի երեք հրատարակությունների (Ք. Պատկանյան[6], Ս. Մալխասյան[7], Գ. Աբգարյան[8]) և ֆրանսերեն թարգմանության (Ֆ. Մակլեր[9]) ծանոթագրությունների մեջ, իսկ Թ. Մ. Միհրդատյանցի[10] հայերեն բնագրի հրատարակությունը ծանոթագրություններ չունի։ Սեբեոսի պատմական տեղեկությունների վերլուծման հարցում կարելի է հիշել Հ. Հյուբշմանի կատարած՝ Սեբեոսի հակիրճ գերմաներեն թարգմանության[11] ծանոթագրությունները և հատկապես Պ. Պետերսի[12] հայտնի հոդվածը (Թեոդորոս Ռշտունուն Թեոփանեսի կողմից տրված անվան մասին)։

Սեբեոսի պատմությունը բացառիկ աղբյուր է VII դարի պատմության համար, քանզի բյուզանդական պատմագրության մեջ այդ դարը (Թեոփիլակտոս Սիմոկատտասից, որն իր շարադրանքը հասցրել է մինչև 602, մինչև Թեոփանես Խոստովանողը, որն իր ժամանակագրությունը հասցրել է մինչև 813) գրեթե ամլության շրջան է[13], Ասորական պատմագրության մեջ ևս VI դարի բուռն զարգացումից հետո (Յեշվա Ստիլիտ, Զաքարիա Հռետոր, Հովհան Եփեսացի) հաջորդ դարը նույնպես ամլության շրջան է մինչև Կեղծ Դիոնիսիոս

---

1 Ն. Ակինյան. Սեբեոս եպիսկոպոս Բագրատունյաց և յուր Պատմությունն ի Հերակղ.— «Մատենագրական հետազոտություններ», հ. Բ, Ազգային մատենադարան, ՃԴ, Վիեննա, 1924։

2 Գ. Աբգարյան. Սեբեոսի Պատմությունը և Անանունի առեղծվածը. Երևան, 1965։

3 Պ. Անանյան. Սեբեոսի Պատմության գրքի մասին քանի մը լուսաբանություններ. Վենետիկ, 1972։

4 История императора Иракла, сочинение епископа Себеоса писателя VII века. Перевод с армянского К. Патканяна. С. Петербург, 1862.

5 История епископа Себеоса. Перевел с четвертого исправленного армянского издания Ст. Малхасянц. Ереван, 1939.

6 Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն, ի լոյս էած Ք. Պատկանեան. Ս. Պետերբուրգ, 1879։

7 Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն. Երևան, 1939։

8 Պատմութիւն Սեբէոսի, աշխ. Գ. Աբգարյանի. Երևան, 1979։

9 Histoire d'Heraclius par l'évêque Sebêos, trad. par F. Macler. Paris, 1904.

10 Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն. Կոստանդնուպոլիս, 1851։

11 Zur Geschichte Armeniens und der erster Kriege des Araber. Aus dem Armenischen des Sebeos. H. Hübschmann. Leipzig, 1875.

12 P. Peeters. Πασαγνάθης — Περσογένης.—Byzantion, VIII, f. II, Bruxelles, 1933, p. 405—423.

13 История Византии. I, М., 1967, с. 37; II, с. 9.

Տելլ Մահրացին, որի երկը շարադրված է 775 թ.[14]։ Ինչ վերաբերում է արաբական պատմագրությանը, ապա VII դարում, եթե նույնիսկ մանր դրվագներ գրվել են առաջին արշավանքների մասին, ապա նրանց հետքը հազիվ է մնացել։

Սեբեոսի պատմական երկը կարևոր աղբյուր է հատկապես V—VII դդ. պատմության համար, սակայն տվյալ դեպքում մենք կամենում ենք վերլուծել VII դարի դեպքերի մասին տեղեկությունները 40-ական թթ. մինչև 661 թ., որով ավարտվում է Սեբեոսի շարադրանքը, ընդ որում քննության կառնենք միայն այն տեղեկությունները, որոնք ցայժմ բավարար չափով կամ բոլորովին չեն պարզաբանված պատմական ուսումնասիրություններում և Սեբեոսին նվիրված հետազոտությունների մեջ։

Սեբեոսը հիշում է, որ Հերակլ կայսեր մահից հետո թագավորեց որդին՝ Կոստանդինը (որը ծնված էր Հերակլի առաջին կնոջից) և իր զորքի հրամանատար նշանակեց Վաղենտինոսին, որն Արշակունի էր, հրամայելով[15] նրան զորքով գնալ Արևելք։ Սակայն երբ Կոստանդինի դեմ դավեց Հերակլի երկրորդ կին Մարտինան և նրա փոխարեն թագավորեցրեց իր որդի Երակլոսին (Հերակլեոնաս)՝ ինքը դառնալով խնամակալ, ապա Վաղենտինոսը զորքով մտավ Կոստանդնուպոլիս և ձերբակալելով Մարտինային, նրա լեզուն կտրել տվեց ու սպանեց նրան ու որդուն և կայսր դարձրեց Կոստանդինի որդի Կոստասին (Կոստանդ)[16]։

Այսպես, Սեբեոսի վկայությամբ, Վաղենտինոսը Կոստանդին կայսեր հրամանով իր զորքով մեկնեց Արևելք, ապա տեղեկանալով Կոստանդնուպոլսում կատարվածի մասին՝ եկավ մայրաքաղաք և այլն։ Հետաքրքրական է, որ բյուզանդագետ Գ. Օստրոգորսկին ընդունելով, որ Վաղենտինոսը հայ է և Արշակունի, նշում է, որ գալով Կոստանդնուպոլիս նա Հերակլեոնասին ստիպեց իրեն գահակից դարձնել վերոհիշյալ Կոստանդինի որդի Կոստանդին, իսկ 641-ի սեպտեմբերին ծերակույտի հրամանով Մարտինան ու Հերակլեոնասը ձերբակալվեցին, Մարտինայի լեզուն կտրեցին և երկուսին էլ աքսորեցին Հռոդոս կղզին, իսկ Կոստանդը դարձավ կայսր[17]։

Ավելի պարզ հասկանալու համար Սեբեոսի այն տեղեկությունը, թե Վաղենտինոսը զորքով գնաց Արևելք և ապա վերադարձավ Կոստանդնուպոլիս, դիմենք կեղծ Դիոնիսիոս Տելլ Մահրացու երկին. «955 (643—644) տարում հոռոմ զորավար Վալենտինոս պատրիկը եկավ կռվելու արաբների դեմ։ Ահաբեկված նրանց ներկայությունից, նա փախավ և թողեց իր հետ եղած բոլոր հարստությունները, որ ընկան արաբների ձեռքը»[18]։ Ուրեմն Վաղենտինոսը գնացել էր Արևելք արաբների դեմ կռվելու։

Արևելքում Վաղենտինոսի ունեցած գործունեության մասին ավելի մանրամասն և պարզ տեղեկություններ են տալիս Միքայել Ասորին[19] (XII դար) և Անանուն Եդեսացին[20]։ Ըստ նրանց, Դավիթ կոչված հայազգի զորավարը մեծաթիվ զորքով կայսերական քաղաքից (ըստ Անանունի՝ իր երկրից, այսինքն Հայաստանից), իսկ Վալենտինոսը արևմուտքից արշավանքի ելան։ Նրանք պայմանավորվել էին երկու կողմից ջախջախել արաբներին։ Վերջիններս, իմանալով այդ մասին, նախ հարձակվեցին Վալենտինոսի վրա և նրա զորքը ամ-

---

[14] В. Райт. Краткий очерк истории сирийской литературы. СПб., 1902, с. 93—108.

[15] История имп. Иракла (Себеос), пер. Патканяна, с. 124.

[16] Սեբեոս. Երևան, 1979, էջ 140—141։

[17] G. Ostrogorsky. History of the Byzantine State. Oxford, 1969, p. 113—114 Թեոփանես խոստովանող. թարգմ. Հ. Բարթիկյանի. Երևան, 1983, էջ 51։

[18] Chronique de Denys de Tell-Mahré, trad. par J. B. Chabot. Paris, 1895, p. 7.

[19] Chronique de Michel le Syrien, trad. par J. B. Chabot. Paris, II, p. 443—444.

[20] Н. В. Пигулевская. Византия и Иран на рубеже VI и VII веков. М.—Л., 1946, с. 287. Անանուն Եդեսացի. Ժամանակագրություն, թարգմ. Լ. Տեր-Պետրոսյանի. Երևան, 1982, էջ 198—200։

յողջուվիս կոտորվեց։ Երբ Դավիթը հասավ Միջագետք, տեսավ որ արաբները չկան Ի կանգ առավ Բեթ-Մաադայում (Մարդինից հյուսիս-արևմուտք)։ Երբ Վերին Միջագետքը նվաճող արաբ զորավար Իյադ իբն Ղանմը լսեց Դավթի արշավանքի մասին, եկավ Եդեսիա։ Դավիթը և ասորի զորավար Տիտոսը իրենց զորքերով նույնպես եկան Եդեսիա։ Սակայն Դավթի և Տիտոսի միջև եղած տարաձայնությունների հետևանքով Դավիթը մենակ կռվեց արաբների դեմ և իր ողջ զորքի հետ սրի մատնվեց։

Երկու հայազգի զորավարների՝ Վաղենտիանոսի և Դավթի հարձակումը և պարտությունը պետք է տեղի ունեցած լիներ, ինչպես Սեբեոսն է վկայում, այն տարում, երբ Կոստանդնուպոլսում քաղաքական պայքար կար, այսինքն 641-ին։ Բացի այդ թե՛ Միքայել Ասորին, թե՛ Անանուն Եդեսացին վկայում են, որ Իյադը եկավ կռվելու Դավթի դեմ, մինչդեռ նա, ըստ Բալադուրիի[21], մահացել է հիջրի 20 (640—641) թ.։ Ուստի պետք է ընդունել 641 թ.։ Բյուզանդական այս հարձակումները պատասխան հարված տալու մի փորձ էին՝ արարների կողմից 639-ին բյուզանդական Վերին Միջագետքը նվաճելուն և 640-ին Հայաստանում կատարած նրանց ասպատակությանը։ Հետագայում, ինչպես Սեբեոսն է վկայում (ըստ Թեոփանեսի՝ արարչագործության 6136, այսինքն 645 թ.) Վաղենտիանոսն ապստամբեց Կոստանդ II-ի դեմ, սակայն սպանվեց[22]։

Սեբեոսը հիշում է, որ հռոմների թագավորության մեջ ներքին երկպառակություններ եղան, և կայսրը պետության գլխավոր մարդկանց ու խորհրդականներին կոտորեց։ Սպանվեցին նաև Գեորգ Մագիստրոսը և Մանուելը՝ Վարազտիրոց Բագրատունու որդի Սմբատի անները[23]։

Մանուելը, որը 645-ին 300 նավերով արշավել էր Եգիպտոս[24]՝ այդ երկիրը արարներից վերագրավելու, սակայն Ալեքսանդրիան գրավելուց հետո պարտվել էր ու նահանջել, Ք. Պատկանյանի կողմից համարվում է Մամիկոնյան[25], իսկ Յ. Մարկվարտը գտնում է, որ նա Արշակունի էր[26]։ Յու. Կուլակովսկին դրում է, որ Մանուելը, Ալեքսանդրիայից վերադառնալով Կոստանդնուպոլիս, որոշ ժամանակ զբաղեցրել է զորքի մագիստրոսի պաշտոնը, ապա խառնվելով պալատական մութ սադրանքներին՝ ներքաշվել է կայսեր դեմ դավադրության մեջ, սակայն Սմբատը նրան ձերբակալելով հանձնել է կայսրին, որը մահապատժի է ենթարկել նրան մոտավորապես 648-ին[27]։ Սակայն ինչպես կտեսնենք Սմբատը չէր որ Մանուելին հանձնեց կայսրին։

Սեբեոսի մոտ հետևյալն է պատմվում. «Սպանեցին նաև Գեորգ Մագիստրոսին և Մանուելին, առաքինի մարդուն, որը մեծն Սմբատ Խոսրով Շումի կոչեցյալի որդու՝ Վարազտիրոցի որդի Սմբատ ասպետի անեն էր։ Որի (Մանուելի) մասին ոմանք ասել էին, թե գիշերը նրա սպանման վայրում վառված ճրագներ են տեսել։ Սմբատին աքսորեցին, քանզի այդ դեպքերից հետո նրա զորքերը նրան ստիպեցին ապստամբել։ Իսկ նրա մասին ասացին թագավորին, թե իբր նա ասում էր, թե պետք է Մագիստրոսի արյան վրեժը լուծել։

Մագիստրոսը այդ կողմերի զորքի իշխանն էր և սիրելի բոլոր զորքերին։ Սմբատը թրակացվոց իշխանների զորքի իշխանն (հրամանատար) էր, իսկ Մանուելը Կոստանդնուպոլսում մագիստրոսի պաշտոն էր զբաղեցնում։

---

21 Liber expugnationis regionum auctore al Beladsori, ed. M. J. de Goeje. Lugd. Bat., 1866, p. 176.

22 Սեբեոս, էջ 143։ Թեոփանես, էջ 52։

23 Սեբեոս, էջ 162։

24 Ph. Hitti. History of the Arabs. London. 1938, p. 166.

25 Себеос. пер. Паткаияна, с. 212. прим. 215.

26 Յ. Մարկվարտ. Հայ Բագրատունյաց ճյուղագրությունը. Վիեննա, 1913, էջ 10։

27 Ю. Кулаковский. История Византии. Киев, 1915, III, с. 194. Տե՛ս նաև Յ. Մարկվարտ. նշվ. աշխ., էջ 10։

Թագավորը չհամարձակվեց Մագիստրոսին բացեիբաց (համարձակապէս) իր մոտ կանչել, վախենալով զորքի ապստամբությունից, այլ Սմբատ ասպետին իր մոտ կանչեց և տերունական խաչով, որն իր վրա էր կրում, երդվեց տվեց, որ ոչ ոքի ոչինչ չհայտնի և նրան արձակեց իր զորքի մոտ, որ քաղցրությամբ (խաղաղությամբ) խոսի Մագիստրոսի հետ և խաբեությամբ բերի իր մոտ։ Սակայն նա գնալով չկարողացավ խաբել նրան, մանավանդ որ նա (Մագիստրոսը) արդեն գիտեր (նրա համար գաղտնիք չէր) այդ բանը։ Ապա (Սմբատը) խոսեց զորքի բոլոր իշխանների (հրամանատարներ) հետ և ցույց տվեց արքունի հրամանը։ Իսկ նրանք և ամբողջ զորքը, չկարողանալով ընդդիմանալ արքունի հրամանին, նրան (Մագիստրոսին) հանձնեցին նրանց (իշխանությունների՞) ձեռքը, որ նրան կապելով տարան թագավորի առջև։ Դրա համար թրակացվոց իշխանների զորքը նրա (Սմբատի) մահը ցանկացան և նրա մասին ասացին, որ նա էր ապստամբությունը հղացել և պետք է մեռնի։ Սակայն արքան խնայեց նրան ու նրանցից հեռացնելով փրկեց»[28]։

Այս ամենը կարելի է հետևյալ ձևով վերապատմել.

Գեորգ Մագիստրոսը, որը զորքի հրամանատար էր, և Մանուելը, որը նույնպես մագիստրոսի պաշտոն էր զբաղեցնում, Կոստանդ II-ից դժգոհ լինելով որոշեցին մասնակցել նրա դեմ կազմակերպված դավադրությանը։ Կայսրը, իմանալով նրանց մտադրության մասին, համենայն դեպս չհամարձակվեց բացահայտորեն իր մոտ կանչել Գեորգ Մագիստրոսին՝ վախենալով զորքի ապստամբությունից և որոշեց օգտագործել Սմբատ Բագրատունուն (որը թրակիական զորքի հրամանատարն էր) և երդվել տալով նրան՝ հանձնարարեց Գեորգ Մագիստրոսին խաբեությամբ իր մոտ բերել։ Սակայն երբ Սմբատն իմացավ, որ Գեորգը տեղյակ է կայսեր մտադրությանը, ապա արքունի հրամանը երևան հանեց, իսկ նրա զորքը, հնազանդվելով կայսեր հրամանին, բռնեց Գեորգ Մագիստրոսին և հանձնեց Կոստանդ II-ին։ Գեորգ Մագիստրոսը, ինչպես նաև Մանուելը, որը նույնպես ձերբակալված էր, մահվան դատապարտվեցին։ Սմբատ Բագրատունու զորքը նրան մեղադրեց կայսեր մոտ, թե նա կոչ է արել Գեորգ Մագիստրոսի վրեժը լուծելու։ Սակայն կայսրը խնայելով նրան՝ միայն աքսորեց[29]։

Այլ պատմիչների երկերում Գեորգ Մագիստրոսի մասին լրացուցիչ տեղեկություններ չկան, սակայն Մանուելի վերաբերյալ կան բավական վկայություններ։ Ըստ Թեոփանեսի[30], երբ Ալեքսանդրիայի պատրիարք (միաժամանակ կառավարիչ) Կյուրոսը պարտավորվեց խալիֆայությանը տարեկան 12 բյուր դինար (ոսկեդրամ) վճարել, Հերակլ կայսրը «զայրացած նրան կանչեց, իսկ ավգուստալիոս նշանակեց հայազգի ոմն Մանուելի։ Երբ ժամանակը լրացավ, սարակինոսների գործակալներն եկան ոսկին ստանալու, բայց Մանուելը նրանց ձեռնունայն դուրս հանեց, ասելով. «Ես անզեն Կյուրոսը չեմ, որ ձեզ հարկ վճարեմ։ Ես զինված եմ»։ Հենց որ սրանք հեռացան, սարակինոսները Եգիպտոսի վրա հարձակվեցին, Մանուելին մարտ տվեցին և փախուստի մատնեցին։ Նա մի քանի հոգով փրկվեց Ալեքսանդրիայում»։

Միքայել Ասորին[31] և Անանուն Եդեսացին[32] գրեթե նույնությամբ կրկնում են Թեոփանեսին։

Խալիֆա իբն Խայյաթը[33] հիջրի 25 (28 հոկտեմբեր 645—16 հոկտեմբեր 646) թ. հիշում է. «Այդ տարում Հռոմի թագավորը ներքինի Մանուելին նավերով ուղարկեց Ալեքսանդրիա, որի բնակչությունն ապստամբել էր, բացի

---

28 Սեբեոս, էջ 161—163։

29 Նույն տեղում, էջ 342, ծան. 602։

30 Թեոփանես, էջ 47։

31 Michel le Syrien, II, p. 425.

32 Անանուն Եդեսացի, էջ 198։

33 Khalifa Ibn Khayyat. Tarikh. Damas—Beyrouth, 1977, p. 158.

Մուկաուկիսից (պատրիարքից)։ Ամրու իբն ալ-Ասը 25 թվականի Ռաբի Ա ամսին (26 դեկտեմբեր 645—24 հունվար 646) արշավեց ու բռնի ուժով նվաճեց Եգիպտոսի հողը»։

Բալաղուրին վկայում է, որ Ալեքսանդրիայի հոռոմները գրեցին Կոստանդ II-ին (Կուսթանթին), հաղորդելով, թե իրենց մոտ եղած մահմեդականների կայազորը փոքրաթիվ է և իրենք նվաստացած վիճակում են, գլխահարկ են վճարում։ Նա ուղարկեց իր մերձավորներից մեկին, որը կոչվում էր Մանուել (Մանուիլ), ռազմիկներով լցված երեք հարյուր նավերով, որոնք մտնելով Ալեքսանդրիա՝ կոտորեցին մահմեդական կայազորը։ Դա կատարվեց հիջրի 25 թ.։ Նրանց ռազմիկները դուրս եկան Ալեքսանդրիայից այն կողմ, ասպատակելով Եգիպտոսի գյուղերը։ Մահմեդական զորքը հանդիպեց նրանց ու հաղթեց, իսկ հոռոմները ապաստանեցին Ալեքսանդրիայում։ Ամրու իբն ալ-Ասը քարանետ մեքենաներ դրեց և մահմեդականները մտան քաղաք ու կոտորեցին, գերեվարեցին, իսկ հոռոմներից ոմանք փախան Ռում (Բյուզանդիա)։ Ալլահի թշնամի Մանուելն սպանվեց[34]։

Եգիպտոսի նվաճման մասին պատմող Իբն Աբդ ալ-Հաքամը (802—871) նշում է, որ Ալեքսանդրիայի պայմանագիրը (արաբների և Կյուրոս պատրիարքի միջև) խախտվեց և հոռոմները Մանուել ներքինու գլխավորությամբ նավերով անցան ծովը և մտան Ալեքսանդրիա ու նրանց միացան տեղի հոռոմները, իսկ Մուկաուկիսը (պատրիարքը) ոչինչ չարեց, որ պայմանագիրը խախտած չլինի։

Հոռոմներն Ալեքսանդրիայից դուրս եկան ու հասան Նիկիուս կոչված վայրը, ուր ճակատամարտ տեղի ունեցավ և Ամրու իբն ալ-Ասը հաղթեց Մանուելի զորքին, որը նահանջեց Ալեքսանդրիա։ Արաբներն ուժեղ հարձակումով գրավեցին քաղաքը, իսկ Մանուել ներքինին սպանվեց[35]։

Թեոփանեսի և արաբ պատմիչների (Բալաղուրի, Իբն Աբդ ալ-Հաքամ) տեղեկությունների մեջ չափազանցություններ կան։ Թեոփանեսն այնպես է նկարագրում, որ կարծես Մանուելը ամբողջ Եգիպտոսը նվաճել էր և արաբները նկան հարկ պահանջելու։ Բանն այն է, որ Մանուելի զորքը Ալեքսանդրիայից այն կողմ հասավ մինչև Նիկիու և պարտվելով նահանջեց, այնպես որ արաբ հարկահանների հետ գործ ունենալ չէր կարող։ Իսկ աուգուստալիոս (Եգիպտոսի բյուզանդական կառավարիչ) տիտղոսը մնաց ձևական։

Հավաստի չէ նաև արաբ պատմիչների այն վկայությունը, թե Մանուելն սպանվեց։ Թեոփանեսը պարզ նշում է, որ նա փրկվեց Ալեքսանդրիայում։ Բյուզանդագիտական գրականության[36] մեջ հիշվում է, որ Մանուելը հասավ Կոստանդնուպոլիս։

Սեբեոսը նկարագրում է մի արաբական ծովամարտ Բյուզանդիայի դեմ։ Արաբները նավատորմ կազմեցին և հասնելով Կոստանդնուպոլիս, կամեցան կռվել նրա դեմ։ Սակայն բյուզանդական նավատորմիղը խորտակեց արաբականը (նավերի մի մասը հրկիզվեց, մյուսը՝ փախստյան մատնվեց)[37]։ Բանն այն է, որ ըստ բյուզանդական, արաբական և ասորական աղբյուրների այդ ժամանակ (Սեբեոսը ոչ մի տվյալ չի տալիս ժամանակը որոշելու, սակայն կարելի է ասել, որ դա մոտավորապես 650-ի ժամանակներն են ըստ Սեբեոսի շարադրանքի) Կոստանդնուպոլսի դեմ որևէ արաբական հարձակում չի եղել։ Պ. Պետերսը գտնում է, որ Կոստանդնուպոլիս տեղանունը գրչական սխալ է և պետք է կարդալ Կոստանդիա[38]։ Այսպես, Թեոփանեսը վկայում է, որ արար-

---

[34] Beladsori, p. 221.

[35] Ибн Абд ал-Хакам. Завсевание Египта, пер. С. Б. Певзнера. М., 1985, с. 192—194.

[36] Ostrogorsky. History, p. 115

[37] Սեբեոս, էջ 147,

[38] P. Peeters, p 410. Սեբեոս, էջ 317, ծան. 525։

չագործության 6140 (այսինքն 649) թ. «Մուավիան ծովով արշավեց Կիպրոսի վրա։ Նա հազար յոթ հարյուր նավ ուներ։ Գրավելով Կոստանդիան, ողջ կղզով հանդերձ, ավարառեց այն։ Լսելով, որ Կակորիզոս կուբիկուլարիոսը հռոմեական մեծաթիվ զորքով իր վրա է գալիս, նա նավարկեց Արադոսի դիմաց, ուր խարիսխ գցելով, փորձեց գրավել կղզու Կաստելլոն ավանը, բոլոր միջոցները գործի դնելով»։ Սակայն արդյունքի չհասնելով հուսահատ վերադարձավ Դամասկոս[39]։ Բյուզանդական մեծաթիվ զորքի գալուստը լսելով, Մուավիայի Կիպրոսից հեռանալը և անհաջողությունը Արադոս կղզում Սեբեոսի մոտ պատկերացված է որպես արաբների պարտություն։

Ապա Սեբեոսն անմիջապես ավելացնում է, որ Կոստանդ կայսրը անհանգստանալով (զարհուրելով)՝ համենայն դեպս լավ համարեց հաշտություն կնքել և հարկ (սակ) տալ։ Նա Պրոկոպին հրամայեց գնալ Դամասկոս՝ Մուավիայի մոտ, և հաշտություն կնքվեց, ըստ որի սահմանվեց հարկի չափը[40]։

Այս մասին վկայում է նաև ասորի պատմիչ Կեղծ Դիոնիսիոս Տելլ Մահրացին։ Հունաց 964 (652—653) թ. նա հիշում է. «Հաբիբը նվաճեց Միջագետքը[41] և Պրոկոպիոսը եկավ հաշտություն կնքելու արաբների հետ»[42]։

Թեոփանեսը հետևյալ ձևով է պատմում. աշխարհագործության 6142 (651) թ. «զորահրամանատար Բուսուրը արաբներով արշավեց ընդդեմ Իսավրիայի, կոտորեց, շատերին գերեվարեց և հինգ հազար գերիներով վերադարձավ։ Կոստաս կայսրը ոմն Պրոկոպիոսի հաշտություն կնքելու համար Մուավիայի մոտ ուղարկեց։ Երկու տարի ժամանակով հաշտություն կնքվեց, որի համար Մուավիան Դամասկոսում պատանդ պահեց Թեոդորոսի որդի Գրիգորիոսին»[43]։

Միքայել Ասորին ևս պատմում է այս դեպքերի մասին, սակայն մի քիչ այլ ձևով (նրա աղբյուրը Թեոփանեսն է). երբ արաբները նորից պատրաստվում էին արշավել Կոստանդնուպոլիս, Պտղոմեոսը[44] եկավ նրանց ամենամյա հողահարկ խոստանալու հռոմների երկրից, բայց երբ նրանց խաբեց, արաբները հարձակվեցին և կողոպտեցին Իսավրիան։ Պտղոմեոսը կրկին գնաց, տվեց ոսկին և արաբների հետ զինադադար կնքեց՝ երեք տարով։ Կայսրն իր եղբորորդուն՝ Գրիգորիոսին ուղարկեց Մուավիայի մոտ որպես պատանդ[45]։

Ուրեմն արաբներն այդ տարի իրոք նպատակ են ունեցել արշավել Կոստանդնուպոլիս, որի արձագանքն է Սեբեոսի այն տեղեկությունը, թե արաբներն արշավեցին Կոստանդնուպոլիս։ Ինչ վերաբերում է Թեոփանեսի մոտ հիշված պայմանագրի երկու տարվա ժամկետի փոխարեն Միքայել Ասորու մոտ նշված երեք տարուն, ապա Սեբեոսի մոտ ևս կա երեք տարվա ժամկետի հիշատակումը. «Արդ իբրև ետես արքայն Իսմայելի զյաջողումն յաղթութեանս և զի բարձաւ թագաւորութիւնն Պարսից, իբրև լցան ամք Գ պայմանի խաղաղութեանն՝ ոչ կամեցաւ այլ աւելի առնել խաղաղութիւն ընդ թագաւորին Յունաց, այլ հրաման ետ զաւրաց իւրոց ունել գործ պատերազմի ընդ ծով և ընդ ցամաք»[46]։ Քիչ ստորև, արդեն պատմելով Մուավիայի այդ հարձակման մասին, Սեբեոսը գրում է. «Եւ եղև յամին մետասաներորդի Կոստանդի լուծումն հաշտութեանն՝ որ ընդ Կոստանդին և ընդ Մաւիաս իշխանն Իսմայելի։ Եւ հրաման ետ արքայն Իսմայելի ժողովել զամենայն զաւրս իւր ի կողմանս արևմտից և ունել զգործ պատերազմի ընդ Հոռոմոց թագաւորութեանն, զի առցէն զԿոստանդնուպաւլիս»[47]։

---

39 Թեոփանես, էջ 54։

40 Սեբեոս, էջ 147։

41 Հավանաբար Վերին Միջագետք կամ սահմանային ամրությունների գոտի։

42 Denys de Tell Mahré, p. 8.

43 Թեոփանես, էջ 55։

44 Անհասկանալի է, թե ինչպես Պրոկոպիոսը դարձել է Պտղոմեոս։

45 Michel le Syrien, II, p. 446.

46 Սեբեոս, էջ 164։

47 Նույն տեղում, էջ 169։

Սակայն պետք է ընդունել Թեոփանեսի տեղեկությունը, որ պայմանագիրը երկու տարով էր, քանզի ինչպես կտեսնենք, արաբ պատմիչներ Յակուբիի և Թաբարիի մոտ Սեբեոսի հիշած արշավանքը դրված է 653 թ., այսինքն 651-ի պայմանագրից երկու տարի անց։

Սեբեոսը վկայում է, որ Մուավիան, Կոստանդի թագավորության տասներեքերորդ տարում, այսինքն 653-ին, Ալեքսանդրիայի և այլ ծովեզրյա քաղաքների նավաշինարաններում պատրաստված 300 մեծ և 500 փոքր ռազմանավեր, բազմահազար ռազմիկներով և քարընկեց ու այլ մեքենաներով, ուղարկեց Կոստանդնուպոլիս, իսկ ինքը ցամաքի ճանապարհով հասավ Քաղկեդոն։ Այս կողմերում նրան հնազանդվեց դաշտաբնակ, ծովեզրյա և լեռնաբնակ ժողովուրդը, իսկ հոռոմների զորքը փակվեց Կոստանդնուպոլսում։ Արաբական նավատորմիղը հասավ Կոստանդնուպոլիս և ճակատ կազմեց հարձակման համար։ Սակայն երբ արաբական նավատորմիղը երկու ասպարեզ հեռավորության վրա էր, փոթորիկը խորտակեց արաբական նավերը[48]։

Սեբեոսի այս տեղեկությունը հիմնական գծերով հաստատում են արաբ պատմիչներ Խալիֆա իբն Խայյաթը (IX դար), Յակուբին (IX դար) և Թաբարին (X դար)։ Իբն Խայյաթը[49] հիջրի 32 (12 օգոստոս 652—1 օգոստոս 653) թ. տակ նշում է, որ «այդ տարում Մուավիան արշավեց նեղուցը Կոստանդնուպոլսի կողմից»։ Յակուբին նույն թվականի տակ նշում է, թե Օսման (644—656) խալիֆայի հրամանով Մուավիան ամառային արշավանք (սաիֆա) կատարեց՝ հասնելով Կոստանդնուպոլսի նեղուցը և մեծ նվաճումներ արեց[50]։ Թաբարին ևս վկայում է, որ նույն թվականին Մուավիան արշավեց Կոստանդնուպոլսի նեղուցը, իր հետ ունենալով կնոջը...։ Ասվում է և, թե նրա հետ էր նաև քույրը[51]։Ակներևորեն այս արշավանքը կատարվել է գարնան վերջին կամ ամռան սկզբին, որպես հակահարված 652-ին Կոստանդ II-ի կողմից Հայաստան կատարված բյուզանդական արշավանքին։

Սեբեոսը նշում է արաբների մի ուրիշ արշավանք՝ արդեն խազարների դեմ, որն ինչպես կտեսնենք, կատարվել է նույն 653-ին։ Նախքան արշավանքի նկարագրությունը նա պատմում է, որ Ատրպատականի տեղական իրանական բնակչությունը (մարք) ապստամբեց Արաբական խալիֆայության դեմ՝ չդիմանալով ծանր հարկապահանջությանը։ Նրանք իրենց համար թիկունք ունեին անանցանելի կիրճերով պատած էլբուրս լեռները, ուր ապրում էին Դայլամի (Դելումք) և Գիլանի (Գեղք, Գեղան) քաջարի լեռնականները[52]։

Արաբ պատմիչ Բալազուրին (IX դար) խոսելով Օսման (644—656) խալիֆայի իշխանության շրջանի մասին, առանց թվական հիշելու նշում է, որ Աշաաս իբն Կայս կառավարչի օրոք Ատրպատականի ժողովուրդը ապստամբեց, նա օգնություն խնդրեց և խալիֆան մեծ զորք ուղարկեց։ Սակայն երկիրը չհանդարտվեց և Օսմանն ուղարկեց Սաիդ իբն ալ-Ասին, որը Քուֆայի կառավարիչն էր (փոխարքայի իրավունքներով) հիջրի 30 (650—651)—34 (654—655) թթ.։ Սա հարձակվեց Մուղանի ու Գիլանի ժողովրդի վրա։ Ապա նրա դեմ

---

48 Սեբեոս, էջ 169—171։

49 Khalīfa ibn Khayyat. p. 167.

50 Yaqubi. Tarikh, Beyrouth, 1960. II. p. 169.

51 Tabari, Tarikh. Le Caire. 1963, IV. p. 3)4. Երբ Կիպրոս կղզին նվաճելու համար Մուավիան արտոնություն խնդրեց Օսման խալիֆայից, վերջինս թույլատրեց միայն այն պայմանով, որ կնոջն էլ հետը վերցնի։ Belādsori. p. 153. Ըստ երևույթին այսպիսով երաշխավորվում էր պատասխանատվության զգացումը և զգուշությունը։

52 Սեբեոս, էջ 172—173։ Գիլանը (Գեղան) գտնվում է Կասպից ծովի ափի դաշտային մասում, իսկ Դայլամը (Դելումք)՝ էլբուրս լեռների վրա և երկուսը կազմում էին մեկ քաղաքական միավոր, որը երբեք չի նվաճվել խալիֆայության կողմից և լիակատար անկախություն է վայելել, նույնիսկ ասպատակություններ կատարել խալիֆայական հողերում։ Այս միավորի դոյությունը նպաստավոր էր Ատրպատականի ու Շիրվանի իրանական ազգաբնակչության և Հայաստանի համար՝ խալիֆայության դեմ մղված պայքարում։

հավաքվեցին Ուրմի (Ուրմիայի) և Բալվանքիրջի հայերը և Ատրպատականի ժողովուրդը, իսկ նա ուղարկեց մի զորավարի, որը հաղթեց նրանց և նրանց պետին բռնելով խաչի վրա մահապատժի ենթարկեց Բաջարվան բերդի մոտ (վրա)[53]։

Մեկ այլ դեպքում Բալազուրին, խոսելով Դայլամի մասին, նշում է, որ Սաիդ իբն ալ-Ասը հարձակվեց Դայլամի վրա[54] և լռում է, որ նշանակում է, թե այդ զորավարը հաջողություն չունեցավ։

Խալիֆա իբն Խայյաթը հիշում է, որ հիջրի 29 թ. Ատրպատականը ապըստամբեց և Սաիդ իբն ալ-Ասը, արշավելով, ճնշեց[55]։ Բանն այն է, որ անմիջապես դրանից առաջ պատմիչը հիշում է ապստամբած Վրկանի հպատակեցումը և նշում, որ ասվում է նաև, թե դա կատարվել է հիջրի 30 (4 սեպտեմբերի 650—23 օգոստոսի 651) թ., այսինքն 651-ին։ Այդ հիման վրա կարող ենք ենթադրել, որ Վրկանի և Ատրպատականի հպատակեցումը ևս կատարվել է 651-ին, երբ Սաիդն արդեն Քուֆայի կառավարիչն էր։ Հավանաբար նույն 651-ին (կամ ավելի ուշ) կարելի է դնել նաև Սաիդի անհաջող արշավանքը Դայլամ, որի մասին վկայում է Բալազուրին, մանավանդ որ ըստ Թաբարիի հիջրի 30 թ. Սաիդ իբն ալ-Ասը արշավեց Դայլամին հարևան Թաբարիստան նահանգը[56]։

Այսպիսով, Սեբեոսի տեղեկությունները Ատրպատականում և Գիլան-Դայլամ նահանգում կատարված դեպքերի մասին հաստատվում են Բալազուրիի տվյալներով։

Այս ամենից անմիջապես հետո Սեբեոսն ավելացնում է, որ անհաջողության մատնվելով Գիլան-Դայլամի դեմ պայքարում, արաբները գնացին Ճորա պահակ (Կապանս Ճորայ) և այն կողմ անցնելով ամեն տեղ ավերեցին։ Սակայն երբ եկավ խազարաց (թեստալաց) զորքը, սաստիկ պատերազմ տեղի ունեցավ, արաբները կոտորվեցին, իսկ փրկվողները մերկ, բոբիկ, վիրավոր հասան Տիղբոնի կողմերը[57]։

Թաբարին նկարագրում է, որ հիջրի 32 (12 օգոստոս 652—1 օգոստոս 653) թ. Ատրպատականում գտնվող արաբ զորքի հրամանատար, վերոհիշյալ Սաիդ իբն ալ-Ասը գրեց Դարբանդի (Բաբ) հրամանատար Աբդ ալ-Ռահման իբն Ռաբիային, որ զգույշ լինի խազարների դեմ կռվելու հարցում, սակայն Աբդ ալ-Ռահմանը անզգուշորեն արշավեց դեպի Բալանջար, որը պաշարեց ու քարանետ մեքենաներ դրեց, սակայն խազարները մեծ թվով եկան և Բալանջարի բնակիչներն էլ դուրս եկան։ Պատերազմն սկսվեց և Աբդ ալ Ռահմանն սպանվեց, իսկ արաբաց զորքը ցրվեց, մի մասն ապաստանեց Դարբանդ, որտեղ էր Աբդ ալ-Ռահմանի եղբայր Սալմանը, իսկ մի ուրիշ մասը, փախչելով հարավ, ապաստանեց Գիլանում ու Վրկանում (Ջուրջան)[58]։

Սակայն Բալազուրին[59] և Յակուբին[60] գտնում են, որ խազարների դեմ պայքարողը Սալման իբն Ռաբիան էր, որը Հայաստանի արևելյան նահանգները (Արցախ, Ուտիք, Փայտակարան), Աղվանքը (Կապաղակ, Շաքե-Կամբեճան) և մերձկասպյան շրջանները (Շրուան, Շապորան, Մասքութք և այլն) նվաճելուց հետո 4 հազար ռազմիկներով բախվեց խազարաց խաքանի հետ, սակայն սպանվեց։ Այս բոլորը բնականաբար պետք է կատարվեր 654-ին, երբ Հաբիբ իբն Մասլաման միաժամանակ նվաճում էր Հայաստանը և Վիրքը,

---

53 Beladsori, p. 328—329.

54 Նույն տեղում, էջ 322։

55 Khalifa ibn Khayyat, p. 163.

56 Tabari, IV, p. 269—270.

57 Սեբեոս, էջ 173։

58 Tabari, IV, p. 304.

59 Beladsori, p. 204.

60 Yaqubi, II, p. 168.

որը հավանական չէ։ Կ. Տրեվերը, հավատ ընծայելով Բալազուրիի տեղեկություններին, գտնում է, որ Սեբեոսի տեղեկությունը (հիշած արշավանքը) սրան է վերաբերում[61]։

Սակայն Մ. Արտամոնովը[62] իրավացիորեն գտնում է, որ սխալվում են Բալազուրին ու Ցակուբին և հավաստի են Թաբարիի տվյալներն ու հիշած ժամանակը, այսինքն Աբդ ալ-Ռահման իբն Ռաբիան էր, որ բախվեց խազարների հետ և սպանվեց 653-ին։ Ահա սրան է վերաբերում Սեբեոսի տեղեկությունը խազարների (Թնտալաց) դեմ արաբների պատերազմի մասին, որը կատարվեց 653-ի դարնանը։

Սեբեոսը, խոսելով 653-ի գարնանը Կոստանդնուպոլսի դեմ կատարված արաբական արշավանքի մասին, երբ ինչպես տեսանք արաբական նավատորմիղը խորտակվեց, հիշում է, որ Քաղկեդոնից նահանջող զորքը վերադարձավ իր երկիրը, իսկ Կապադովկիայի (Կապուտկացվոց) կողմերում գտնվող արաբական զորքը բյուզանդական մի զորամասի հետ պատերազմելով՝ պարտվեց և Չորրորդ Հայքը կողոպտելով փախավ Արվաստան (Միգդոնիա, Մծբին)։

Երբ աշունն անցավ և ձմեռը մոտ էր, արաբական մի զորամաս ներխուժեց Հայաստան և հասնելով Դվին այնտեղ հաստատվեց։ Արաբները նպատակ ունեին հարձակվել Վիրքի վրա։ Նրանց հրամանատարը սպառնալիքով լուր ուղարկեց Վիրք (պետք է հասկանալ՝ Վիրքում գտնվող բյուզանդական զորքերին)[63] պահանջելով հպատակվել կամ հեռանալ Վիրքից։ Իսկ նրանք չհամաձայնեցին և պատերազմի պատրաստություն տեսան. արաբները ելան պատերազմելու և իսպառ կոտորելու։ Սակայն հենց որ ճանապարհ ընկան, ցուրտը և ձյունը վրա հասան, որի հետևանքով արաբները հեռացան Ասորեստանի կողմերը՝ ոչ մի չարագործություն (անիրավություն) չկատարելով Հայաստանում[64]։

Ինչպես երևում է, այս աբշավանք-ասպատակության միակ նպատակն էր հետապնդել Վիրքում ապաստանած բյուզանդական զորքերին, որոնք 653-ի գարնանը Թեոդորոս Ռշտունու և նրա ստացած արաբական օգնական զորամասի կողմից հալածվել էին։ Այս դեպքում պետք է ենթադրել, որ Վիրքում ապաստանած բյուզանդական զորքը Մավրիանոսի գլխավորությամբ 654-ին կրկին մտավ Հայաստան և բախվեց Հաբիբ Իբն Մասլամայի զորքի հետ։

Այսպիսով, 653-ի գարնանը արաբները հարձակումներ կատարեցին Բյուզանդիայի և խազարների դեմ՝ Կոստանդ II-ի կողմից նվաճված Հայաստանը նրանց կողմից աքցանի մեջ առնելու նպատակով, միաժամանակ հպատակեցնելով Հայաստանին հարակից Ատրպատականի իրանական ազգաբնակչությանը (բայց ոչ Դիլան-Դայլամը)։ Իսկ 653-ի աշնանը Հայաստան կատարված արաբական արշավանքը առաջին ուղղակի հակահարվածն էր Բյուզանդիայի՝ Հայաստան կատարած արշավանքին։

Երեք պատմիչներ (Սեբեոս, Թեոփանես, Բալազուրի) պատմում են Հաբիբ իբն Մասլամայի կողմից Հայաստանի նվաճվելու մասին և կան լուրջ տարբերություններ հատկապես Սեբեոսի և Բալազուրիի միջև։

Ըստ Բալազուրիի, Հաբիբի զորքը հետևյալ երթուղիով ընթացավ. Կարնո բաղաք, Մարդաղի, Ելաթ, Սիփան, Արճեշ, Ապահունիս, Արտաշատ, Դվին (Դվինի մոտ Հաբիբը բախվեց Մավրիանոսի հետ և հաղթեց), Գառնի, Աշոցք, Կոտայք, Աղատաց հովիտ (Ազատ գետի ձոր), Շիրակ, Տայք, Բագրևանդ, Նախճավան, Սիսական, Վայոց Ձոր, Ջատ ալ-Լուզում (հավանաբար Տաշիրի կողմերը) և ապա Վիրք։ Նույն ժամանակ Սալման իբն Ռաբիան նվաճեց Հայաստանի արևելյան նահանգները (Արցախ, Ուտիք, Փայտակարան), Բուն Աղվան-

---

61 К. В. Тревер. Очерки по истории и культуре Кавказской Албании. М.—Л., 1959, с. 245.

62 М. И. Артамонов. История хазар. Л., 1962, с. 177—179.

63 Սեբեոս, էջ 358—359, ծան. 649։

64 Նույն տեղում, էջ 171։

քը (Կապաղակ, Շաքե-Կամբեճան) և մերձկասպյան շրջանները (հետագայում՝ Շիրվան)[65]։

Սեբեոսը բոլորովին այլ երթուղի է տալիս։ Արաբաց զորքը նվաճեց ամբողջ երկիրը։ Նրան հպատակություն հայտնեցին Մուշեղ Մամիկոնյանը, Թեոդորոս Ռշտունին և բոլոր հայ նախարարները։ Հաբիբը Արուճում, որն իր նստավայրն էր դարձրել, մահվան դատապարտեց Արտավազդ Դիմաքսյանին, որն իր եղբոր մատնությամբ էր ընկել անողորմ դահիճ Հաբիբի ձեռքը։ Հավանաբար այս Արտավազդը ապստամբություն (դիմադրություն) էր նախապատրաստել արաբների դեմ, իսկ եղբայրը դեմ լինելով դրան՝ մատնել էր։

Բագրևանդի կողմերում արաբաց զորքը հանդիպեց Մավրիանոսի զորքին և վատ դրության մեջ ընկավ, նեղվում էր ձմեռային խիստ ցրտից։ Չհամարձակվելով պատերազմի դուրս գալ բյուզանդացիների դեմ, Հաբիբն անցնելով գետը (Արածանի), ամրացավ Զարեհավանում և ամբողջ ձմեռն այնտեղ մնաց։ Բյուզանդացիք, թողնելով արաբներին, կողոպտեցին Դվինի բերդը, ապա իջան Նախճավան՝ այն ևս կողոպտելու, սակայն չկարողացան։

Երբ գարունը բացվեց, բյուզանդացիք պատրաստվեցին պատերազմելու Զարեհավանում ամրացած արաբների դեմ, սակայն Մավրիանոսը պնդեց, որ նախ գրավեն Նախճավանը և կողոպտեն, ապա կռվեն արաբների դեմ։ Երբ բյուզանդացիք կռվում էին Նախճավանի բերդի (հավանաբար հայ պաշտպանների) դեմ, արաբները հարձակվեցին ու կոտորեցին նրանց։ Մավրիանոսը փախավ Վիրք։

Ապա արաբաց զորքը դիմեց արևմուտք ու հասավ Կարնո քաղաքը։ Հաբիբը սկսեց հարձակումը քաղաքի դեմ, սակայն բնակիչները, չկամենալով դիմադրել, քաղաքի դռները բացեցին նրա առջև։ Մտնելով քաղաք արաբներն ամեն ինչ կողոպտեցին։ Դրանից հետո նրանք ավարի մատնեցին ամբողջ Հայաստանը, եկեղեցիներով հանդերձ, ինչպես նաև Սյունիքն ու Աղվանքը։ Նրանք պատանդ տարան երկրի գլխավոր նախարարներին և շատերի կանանց, որդիներին ու դուստրերին։

Գնաց (կամ տարան) նաև Հայոց իշխան և սպարապետ Թեոդորոս Ռշտունին իր համազգիներով և հասավ Ասորեստան (Դամասկոս), ուր օտար հողի վրա վախճանվեց մեծ քաղաքագետը և հմուտ զորավարը, իսկ նրա դին բերին ու թաղեցին հայրենի գավառում[66]։

Արաբների կողմից Հայաստանի նվաճման մասին պատմում է նաև Թեոփանեսը (արարշագործության 6145, այսինքն 654 թ.). հակիրճ կերպով հիշելով Հոողոս կղզու գրավումը, որը հայտնի է, որ կատարվել է 654-ին, ավելացնում է. «Նույն տարին արաբների զորավար Հաբիբը արշավեց Հայաստանի վրա։ Հանդիպելով հռոմայեցիների զորավար Մավրիանոսին, նրան հալածական արեց մինչև Կովկասյան լեռները, իսկ երկիրն ավարառեց»[67]։

Կարևոր տարբերություններ կան Սեբեոսի ու Բալազուրիի տեղեկությունների միջև արաբական զորքի առաջխաղացման երթուղիների նկարագրության մեջ։ Սեբեոսի այն վկայությունը, թե արաբները նախ մխրճվեցին Հայաստանի խորքերը մինչև Արուճ և միայն մի ձմեռ անցկացնելով և բյուզանդացիներին հաղթելուց հետո գնացին ու գրավեցին Կարնո քաղաքը, գուցե բացատրենք նրանով, որ Հաբիբը կամեցավ նախ հակահարված տալ հիմնական և գլխավոր ոսոխին՝ բյուզանդական զորքին և ապա նվաճել լուրջ դիմադրություն ցույց տալու անկարող կամ անտրամադիր հայկական գավառները։

Բացի այդ, Սեբեոսը տարբերվում է նրանով, որ վկայում է, թե Հայաստանի նվաճումը երկու տարում կատարվեց (654—655), որը հավանական է։

---

65 Beladsori, p. 197—104. Հաբիբի արշավանքի մանրամասն նկարագրությունը տե՛ս Արաբացի մատենագիրներ Հայաստանի մասին, թարգմ. Ռ. Խալաթյանց. Վիեննա, 1919, էջ 36—49։

66 Սեբեոս, էջ 173—174։

67 Թեոփանես, էջ 56։

Իսկ Թեոփանեսը և Բալաղուրին այն համարում են մեկ տարում կատարված դեպքություն (654-ին)։ Բալաղուրին սանրամասն նկարագրում է Վիրքը ու Աղվանքի նվաճումը, իսկ Թեոփանեսն ակնարկում է, թե Վիրքը նվաճվեց, երբ զորավար Մավրիանոսին Հաբիբը հալածեց մինչև Կովկասյան լեռները, իսկ Սեբեոսը հիշում է միայն, որ Հաբիբը Մավրիանոսին փախցրեց Վիրք, բայց Աղվանքի մասին նշում է, որ արաբները կողոպտեցին (ուտեսն նվաճեցին ու կողոպտեցին)։ Թեոփանեսի տեղեկությունը, թե Հաբիբը Մավրիանոսին հալածեց մինչև Կովկաս, հաստատվում է Բալաղուրիի այն տեղեկությամբ, որում հաղորդվում է, որ արաբները հասան մինչև Ալանաց դռները։

Աչքի ընկնող տարբերություն է նաև այն, որ ինչքան էլ սարսրինակ է, հավաստի աղբյուր հանդիսացող հեղինակ Սեբեոսը գրում է, թե հայերը անվերտպահորեն հպատակվեցին արաբներին, մինչդեռ Բալաղուրին հիշում է, որ հայերի կողմից եռեք տեղ դրամադրություն եղավ՝ Կարինում, Դվինում և Սյունիքում[68], որը, սակայն, ճնշվեց։ Հավանական է Բալաղուրիի հաղորդածը, և հենց Սեբեոսի հիշած Արտավազդ Դիմաքսյանի անորոշ միջադեպը վկայում է, որ եղել է դիմադրության ձգտում։ Չի կարելի մտածել, թե 652-ի պայմանագրի առկայության պայմաններում հայերը տրամադիր չէին կամ կարծում էին, թե չպետք է դիմադրել։ Չէ՞ որ արաբներն իրենց 654-ի ներխուժումով ամենակոպիտ ձևով ոտնահարել էին այդ պայմանագիրը։ Անշուշտ եղել են դիմադրության հակառակորդներ, սակայն դա՛ չի եղել տիրապետող մտայնությունը։

Ըստ Բալաղուրիի Հաբիբը, ասեն անդամ պայմանագրեր կնքելով, հարգել է հայերի իրավունքները և նույնիսկ երբ Խլաթի պատրիկը Հաբիբին բերել էր հարկը (հավտնաբար ուշացած) և ընծաներ, նա վեհանձնորեն մերժել է։ Սակայն Սեբեոսն ու Թեոփանեսը շեշտում են, որ Հաբիբը և նրա զորքը կողոպտեցին ամբողջ Հայաստանը և որ նա դաժան դատաստան տեսավ Արտավազդ Դիմաքսյանի հետ, որի համար Սեբեոսը նրան «անողորմ դահիճ» է անվանում։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Սեբեոսի պատմական երկը բացառիկ արժեք ունի ոչ միայն Հայաստանի, այլև հարակից երկրների և Բյուզանդիայի ու խալիֆայության VII դարի մի կարևոր ժամանակահատվածի պատմության հետազոտման համար։

СОЧИНЕНИЕ СЕБЕОСА КАК ПЕРВОИСТОЧНИК ПО ИСТОРИИ БЛИЖНЕГО ВОСТОКА VII ВЕКА

Доктор ист. наук | *А. Н. ТЕР-ГЕВОНДЯН* |

Резюме

«История» Себеоса—исключительный по своему значению источник для истории VII века, так как в византийской и сирийской историографии этот век был почти бесплодным, а в арабской—если даже и писались труды, то их след едва заметен. В статье рассмотрены те сведения, приведенные Себеосом, которые до сих пор недостаточно освещены в исторической литературе и в исследованиях, посвященных историку. Показывается, что исторический труд Себеоса—ценный источник для освещения важного периода истории VII века (с 640-х годов до 661 года) не только Армении, но и сопредельных стран, особенно Византии и Арабского халифата.

---

[68] Belaʿdsoni, pp. 197, 200. *Արաբացի մեմենագիրներ*, էջ 37, 43, 44։